

Արարատ Մ. Հակոբյան

Պատմ. գիտ. դոկտոր

ՄԱՐՏԻ 16, ԹԵ՛ 18

Մոսկվայի 1921 թ. ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման ժամկետների շուրջ*

Բանալի բառեր - 1921 թ., Մոսկվայի պայմանագիր, Լոնդոնի համաձայնագիր, մարտի 16, թե՛ 18, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Գ. Չիչերին, «Ազգային ուխտ», Վ. Լենին, տարածք, բանակցություններ, կեղծիք, Կարս, ստորագրել, զիջել:

Մուտք

Մոտենում է Հայաստանի ու հայ ժողովրդի պատմական ճակատագրում աղետալի հետևանքներ ունեցած Մոսկվայի՝ 1921 թ. ռուս-թուրքական «քարեկամության և եղբայրության» պայմանագրի 100-ամյա տարելիցը:

Ինչպես գիտենք, դրանով երկու չճանաչված պետությունների՝ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի կողմից միջազգային պայմանագրային իրավունքի կոպիտ խախտմամբ որոշվել են երրորդ պետության՝ Խորհրդային Հայաստանի տարածքային-սահմանային խնդիրները՝ առանց տվյալ երկրի կառավարության գիտության ու նրա պատվիրակության մասնակցության: Համաձայն միջազգային պայմանագրային իրավունքին վերաբերող՝ Վիեննայի 1961 թ. ապրիլի 18-ի կոնվենցիայի հոդված 46-ի՝ «Հավատագրմամբ լիազորված պետությունը կարող է բանակցային գործընթացում ժամանակավորապես պաշտպանել մեկ այլ՝ երրորդ պետության ու նրա քաղաքացիների շահերը, եթե վերջինս խնդրանքով դիմում է այդ մասին»¹: Մինչդեռ Խորհրդային Հայաստանի կառավարությունը, Մոսկվա գործուղելով իր պատվիրակությանը (ղեկավար՝ արտգործժողկոմ Ալ. Բեկզադյան), բնավ նպատակ չի ունեցել խնդրելու Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը (պատվիրակության ղեկավար՝ արտգործժողկոմ Գ. Չիչերին) բանակցություններում հանդես գալ Հայաստանի անունից և պաշտպանել նրա շահերը: Սակայն զարմանալին այն է, որ պայմանագիրը կնքած երկու երկրները, կոպտորեն խախտելով միջազգային իրավունքը, դիմել են նաև քաղաքական-դիվանագիտական մեկ այլ **աճ-**

վել համահայկական հանդես, ժԲ (ժԸ) 404րի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020

* Ընդունվել է տպագրության 20.02.2020:
1 <https://www.un.org/ru/documents/decl-conv/conventions/dip-rel.shtml> (մուտք՝ 20.10.2020).

պարարություն, որի բացահայտմանն ու պարզաբանմանն է նվիրված սույն հրապարակումը:

1. Մարտի 16, թե՛ 18

1920 թ. դեկտեմբերի 2-ի՝ Երևանի Դրո-Լեզրան համաձայնագրով անկախ և ինքնիշխան հայտարարված Խորհրդային Հայաստանի պատվիրակությանն արգելելով մասնակցել բանակցություններին՝ միջազգային իրավունքի սուբյեկտ չհամարվող Խորհրդային Ռուսաստանն ու քեմալական Ռուրքիան փորձել են նաև սեփական հանցավոր գործարքը քողարկել միջազգային հանրությունից: Այդ նպատակով նրանք դիմել են հետևյալ աճապարարությանը. արխիվային վավերագրերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրն իրականում ստորագրվել է ոչ թե 1921 թ. **մարտի 16-ին**, ինչպես նշված է պայմանագրի տեքստում կամ մինչ օրս հրատարակված փաստաթղթերի ժողովածուներում և պատմագիտական գրականության մեջ, այլ երկու օր ուշ՝ **մարտի 18-ին**: Հարց է ծագում. ինչո՞վ բացատրել միջազգային դիվանագիտության մեջ **հազվադեպ պատահող** նման կեղծիքը:

Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մոսկվայի պայմանագրի ստորագրման ամսաթվի փոփոխությունն ուղղակի կապ ունի այդ նույն օրերին՝ 1921 թ. փետրվար-մարտին Լոնդոնում Խորհրդային Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև տեղի ունեցած բանակցությունների և ստորագրված առևտրական համաձայնագրի հետ:

Հայտնի է, որ ռուս-անգլիական տասնամյա բանակցություններից հետո՝ 1921 թ. **մարտի 16-ին**, Լոնդոնում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեոնիդ Կրասինի և Մեծ Բրիտանիայի առևտրի նախարար Ռոբերտ Հոռնի միջև ստորագրվել է առևտրական համաձայնագիր, որն ուներ նաև քաղաքական ենթատեքստ²: Բանն այն է, որ կողմերը պայմանավորվել էին ձեռնպահ մնալ միմյանց դեմ թշնամական գործողություններից: Ռուսաստանը պարտավորվում էր ձեռնպահ մնալ Բրիտանական կայսրության դեմ թշնամական քայլերից կամ քարոզչությունից Հնդկաստանում, Աֆղանստանում, Իրանում և Մերձավոր Արևելքում: Նույն կերպ Մեծ Բրիտանիան պարտավորվում էր հակառուսական քարոզչություն չտանել նախկին Ռուսական կայսրության տարածքներում, որոնք արդեն անկախացել էին³: Քաղաքական երկկողմանի պարտավորություն ներկայացնող այդ պայմանը ներառվեց ռուս-անգլիական առևտրատնտեսական համաձայնագրի պրեամբուլայում⁴: Նման պայմանի

2 Տե՛ս «Документы внешней политики СССР» (այսուհետ՝ ДВП СССР), т. 3, М., 1959, էջ 607-614:

3 Տե՛ս «Известия», М., 22 марта 1921 г.:

4 Տե՛ս ДВП СССР, т. 3, էջ 608:

ընդունումը նշանակում էր, որ Մեծ Բրիտանիան չէր կարող որևէ ձևով միջամտել կամ օգնություն ցուցաբերել Կովկասի վտարանդի կառավարություններին: Մի այդպիսի վտարանդի կառավարություն էր համարվում նաև 1921 թ. հուլիսից Իրանում գտնվող՝ Ս. Վրացյանի գլխավորած Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որը վերջնականապես լուծարվեց 1923 թ. սեպտեմբերին⁵: Համաձայնագրի կնքումը միաժամանակ նշանակում էր, որ Անգլիան «դե ֆակտո» (փաստացի) ճանաչում է Խորհրդային Ռուսաստանը:

Այս բանակցությունների ընթացքում բոլշևիկների հետ համաձայնագրի կնքման շուրջ լիբերալ վարչապետ Դ. Լյոյդ Չորջի դեմ առարկություններով հանդես եկան պահպանողական նախարարներ Ու. Չերչիլը, լորդ Ջ. Բերգոնը և ուրիշներ: Նրանք Ռուսաստանի հետ համաձայնագիր կնքելու համար դրեցին մի քանի նախապայմաններ: Դրանցից մեկն այն էր, որ Ռուսաստանը վերանայի իր վերաբերմունքը Հայաստանի հանդեպ և Լոնդոնի անգլո-ռուսական առևտրական բանակցություններին գրեթե զուգահեռ Մոսկվայում ընթացող խորհրդա-թուրքական բանակցություններում Հայաստանի օգտին Թուրքիայից տարածքային որոշ զիջումներ պահանջի:

Ուստի որպեսզի անգլիացիներին մոլորության մեջ գցեն, Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի բնագրում կողմերն արձանագրում են մարտի 16, բայց իրականում այն ստորագրում են մարտի 18-ին: Նպատակն այն էր, որ բրիտանական կառավարությանը ցույց տան, որ հայերի համար ոչ նպատավոր Մոսկվայի խորհրդա-թուրքական պայմանագիրն իբր թե ստորագրվել է Լոնդոնի անգլո-ռուսական առևտրական համաձայնագրից առաջ կամ առնվազն դրա նախօրյակին, և իբր ռուսները տեղյակ չեն եղել այդ առևտրական համաձայնագրի քաղաքական բովանդակությանը, որպեսզի Հայաստանի համար թուրքերին տարածքային պահանջներ ներկայացնելին:

Պարզվում է նաև, որ ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման ձգձգման մյուս պատճառն այն էր, որ թուրքերն իբրև պայմանագիրը ստորագրելու նախապայման ռուսներից գրավոր փաստաթուղթ էին պահանջել՝ իրենց զենք և դրամական օգնություն տրամադրելու մասին: Այսպես, Մոսկվայի բանակցություններում Ռուսաստանի պատվիրակության ղեկավար, արտգործոժողկոմ Գ. Չիչերինի կողմից Ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինին հասցեագրված մարտի 17-ի նամակից տեղեկանում ենք, որ պայմանագիրը դեռևս ստորագրված չէր: Չիչերինը հայտնում էր, որ երկար բանավեճից հետո թուրքերը համաձայնել են ստորագրել պայմանագիրը այն պայմանով, որ ինքը պետք է գրավոր խոստում տա՝ առանց այդ մասին պայմանագրում նշելու, և մի քանի տարի շարունակ Թուրքիային տարեկան պետք է տրվի 10 մլն ռուբլի ոսկով՝ իբրև օգնություն նրա

5 Տե՛ս Իրազեկ Հ. (Յ.), Մոսկի անցեալից (պատմական դեպքեր և ապրումներ 1917-1922 թթ.), Պէրյուք, 1956, էջ 151:

տնտեսության վերականգնման համար, որպեսզի չընկալվի, թե դա Մեծ Բրիտանիայի դեմ ուղղված ինչ-որ թշնամական քայլ է: Սակայն իրականում այդ գումարը նրանց հարկավոր էր գենք գնելու համար: Ըստ Չիչերինի՝ «Ամեն ինչ պատրաստ է ստորագրման համար: Պայմանագիրը կստորագրենք վաղը (այսինքն՝ մարտի 18-ին - Ա. Հ.)՝ երեկոյան: Այսօր թուրքերը հայտարարեցին, որ համաձայն են վաղը՝ մարտի 18-ին, ստորագրել պայմանագիրը: Սակայն նախքան ստորագրելը նրանք պետք է ինձանից ստանան այդ գրությունը՝ տարեկան 10 մլն ռուբլի ոսկով հատկացնելու վերաբերյալ: Ես կողմնակից եմ նման գրություն տալուն: Խորհրդային հանրապետությունները ոչ ցավագին կերպով **կստանան Բարձր-մը**: Ես պետք է այսօր՝ մինչև երեկոյան ժամը 6-ը, ստանամ պատասխանը, որպեսզի հասցնենք գրել թուղթը և չձգձգենք ստորագրումը: Պայմանագիրը կթվագրվի 16-ի ամսաթվով, երբ մենք դեռ չգիտեինք Անգլիայի հետ Կրասինի ստորագրած պայմանագրի մասին»⁶: Հաջորդ օրը՝ մարտի 18-ին, ՌԿ(Բ)Կ ԿԿ քաղքյուրոն (Լենին, Տրոցկի, Մտալին, Չինովև, Կամենև, Մոլոտով և այլք) լսում է Գ. Չիչերինի նամակի մասին հարցը և որոշում համաձայնել նրա կարծիքին⁷: Ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրվել է Քաղքյուրոյի որոշումից հետո՝ նույն օրը՝ մարտի 18-ի երեկոյան, որից հետո թուրքական պատվիրակության պատվին տրվել է «հանդիսավոր ընթրիք»⁸:

Ժամանակին այս փաստը բացահայտած Ռ. Ղազանջյանից հետո իրավաբան-միջազգայնագետ, պրոֆ. Յու. Բարսեղովը ՌՍԳԻՄՀ արտաքին գործերի նախարարության և Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության գաղտնագրեծված արխիվային ֆոնդերից դուրս բերած նորահայտ փաստաթղթերով ու նյութերով լրացուցիչ լույս է սփռել ռուս-թուրքական մոսկովյան պայմանագրի ձգձգման պատճառների վրա: Եվ պարզվում է, որ Մոսկովյայի պայմանագրի ստորագրման հետաձգման պատճառը եղել է ոչ միայն և ոչ այնքան Ռուսաստանից դրամական օգնություն ստանալու հարցը, որքան լոնդոնյան բանակցություններում Մեծ Բրիտանիայի դրամ պահանջը՝ Հայաստանի օգտին տարածքային որոշ զիջումներ կատարելու վերաբերյալ⁹:

Այսպես, Գ. Չիչերինը Լոնդոնում գտնվող Ռուսաստանի պաշտոնական ներկայացուցիչ Լեոնիդ Կրասինին 1921 թ. մարտի 20-ին հասցեագրած գաղտնի հեռագրում տվել է հետևյալ հրահանգը. «Եթե անգլիացիները դժգոհություն հայտնեն մոսկովյան պայմանագրի վերաբերյալ, ապա Դուք բացատրություն

6 Казанджян Р., К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г., «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1999, с. 185-187, արխիվային հիմքը՝ Архив внешней политики Российской Федерации МИД РФ, ф. 04, оп. 39, папка 232, д. 53001, л. 44.

7 Տե՛ս Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվ (կրճատ՝ ՌՍԶՊՊԱ կամ РГАСПИ), ֆ. 17, ց. 3, գ. 138, թ. 3 (միկրոժապավենների հավաքածու):

8 Տե՛ս Казанджян Р., նշվ. աշխ., էջ 184:

9 Այդ մասին հանգամանորեն տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества (документы и комментарий)», сост. проф. Барсегов Ю. Г., т. 2, ч. 1, М., 2003, էջ 465-466, т. 2, ч. 2, М., 2005, էջ 428, արխիվային հիմքը՝ Архив внешней политики Российской Федерации МИД РФ, ф. 04, оп. 39, папка 232, д. 53001, л. 44, оп. 52, папка 341, д. 55279, л. 26:

կտաք, որ պայմանագիրը ստորագրվել է Ձեր կողմից Լոնդոնում առևտրական համաձայնագրի ստորագրման օրը, քանզի մենք չէինք սպասում, որ Ձեր բանակցություններն այդքան շուտ կավարտվեն: Մոսկվայի պայմանագրի գլխավոր բովանդակությունը տարածքային սահմանազատումներն են, ինչը կապ չունի Անգլիայի հետ մեր համաձայնագրի հետ: Չէ՞ որ Անգլիան չի կարող մեզանից պահանջել, որ մենք հետ վերցնենք **Կարսը** և **Արդահանը** (ընդգծումը մերն է - Ա. Հ.) Թուրքիային զիջելու պայմանը, կամ էլ հակառակ դեպքում մենք պատերազմ կսկսենք Թուրքիայի դեմ»¹⁰: Ահա այսպիսին է եղել Գ. Չիչերինի ինքնաարդարացման քայլը՝ ուղղված Լ. Կրասինին, որ անգլիացիների դժգոհության դեպքում նրանց պատասխանեն, որ Լոնդոնում ստորագրված ընդամենը առևտրական համաձայնագիրը չպետք է խառնել տարածքային-սահմանային խնդիր հանդիսացող Կարսի և Արդահանի՝ Թուրքիային չզիջելու պայմանի հետ, ինչը կարող է վերջինիս հետ նոր պատերազմի տեղիք տալ:

Ինչպես արդեն ասվեց, այդ նույն օրերին ընթացող անգլո-ռուսական լոնդոնյան բանակցությունների ժամանակ բրիտանական կողմը ռուսներին (Լ. Կրասինին) առաջարկել էր, որ նրանք թուրքերից պահանջեն Կարսի և Արդահանի հանձնումը Հայաստանին, կամ ավելի ստույգ՝ Ռուսաստանը Կարսն ու Արդահանը չզիջի Թուրքիային: Բայց ռուսական կողմը պատճառաբանել է նաև, որ դեռևս 1920 թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում նախաստորագրված ռուս-թուրքական բարեկամության պայմանագրի նախագծով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն արդեն սկզբունքորեն ճանաչել է 1920 թ. (հին տոմարով՝ 1336 թ.) հունվարի 28-ի թուրքական, այսպես կոչված, «Ազգային ուխտ»-ում նշված պետական սահմանները¹¹, որով հայ-թուրքական սահմանագիծն անցնելու էր Արփաչայ և Արաքս գետերի հունով, ուստի նա չի կարող թուրքերին տարածքային պահանջ ներկայացնել:

Մյուս կողմից արդեն պայմանագրի ստորագրումից հետո արտգործկոմիսար Գ. Չիչերինը, պարզաբանելով խորհրդա-թուրքական քաղաքական հարաբերությունների իրական պատկերը, նշում էր, որ «հանձինս Կարսի և Արդահանի՝ մենք մեծ զոհաբերություն արեցինք Թուրքիային: Սակայն ինչպիսի քայլ էլ, որ ձեռնարկի Անգլիան, Թուրքիայի հետ կնքած պայմանագիրն արդեն կատարված փաստ է, և նա չի կարող մեզ ստիպել, որ Թուրքիային արված տարածքային մեր զիջումները հետ պահանջենք»¹²:

Այն փաստը, որ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը մինչև մարտի 18-ը չի ստորագրվել, երևում է նաև կոնֆերանսին չմասնակցած Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանի՝ նույն օրը Միք. Աթաբեկյանին

10 «Геноцид армян (док. и ком.)», т. 2, ч. 1, с. 471, т. 2, ч. 2, с. 428. Տե՛ս նաև՝ ДВП СССР, т. 4, М., 1960, էջ 11.

11 Ռուս-թուրքական ութլետանոց մոսկովյան պայմանագրի նախագիծը տե՛ս **Գաղթյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 267-268: Տե՛ս նաև՝ «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», քաղաքական պատմություն, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող **Ղազարյան Վ.** և ուրիշներ, Եր., 2000, էջ 258-259:

12 РГАСПИ, ф. 85, оп. с/Турция, д. 25, л. 43: Տե՛ս նաև «Геноцид армян (док. и ком.)», т. 2, ч. 1, էջ 471-472:

հասցեագրած նամակից: Այդ նամակում նա ոչ միայն որևէ հիշեցում չի անում պայմանագրի ստորագրման մասին, այլև լավատեսորեն չի արտահայտվում, որ այն առաջիկայում կստորագրվի¹³:

Պայմանագրի ավելի ուշ՝ մարտի 18-ին ստորագրված լինելու մասին անուղղակիորեն վկայում է նաև այն փաստը, որ դրա տեքստն Անգորա է ուղարկվել մարտի 21-ին, իսկ Տրապիզոնի տեղեկատվական բյուրոն (ինֆորմ բյուրոն) այդ մասին հաղորդում է հրապարակել միայն մարտի 23-ին¹⁴: Մոսկվայի պայմանագրի՝ մարտի 18-ին ստորագրման փաստի մասին անուղղակիորեն վկայում է նաև այն իրողությունը, որ պայմանագրի ստորագրման հաջորդ օրը՝ մարտի 19-ին, թուրքական գործը հեռացավ Բաթումից, և նրա փոխարեն քաղաք մտան խորհրդային զորքերը¹⁵: Նույն մարտի 19-ին Գ. Չիչերինը հեռագրում է Ստոկհոլմ՝ Ռուսաստանի առևտրական ներկայացուցչին, որ իբր մարտի 16-ին Մոսկվայում ստորագրվել է ռուս-թուրքական պայմանագիր, և Թուրքիայի տարածքը որոշվել է թուրքական «Ազգային ուխտ»-ի հիման վրա¹⁶:

Որպեսզի բրիտանացիների մոտ կասկած չառաջանա Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման օրվա վերաբերյալ, Գ. Չիչերինը մարտի 22-ին Մոսկվայում անգլիական թղթակցին տված հարցազրույցում դարձյալ պնդել է, որ իբր Մոսկվայի պայմանագիրը կնքվել է Լոնդոնի ռուս-անգլիական համաձայնագրից առաջ¹⁷: Այդ կապակցությամբ նա նշել է. «Թուրքիայի հետ պայմանագիրը ստորագրվել է այն բանից առաջ, նախքան մենք կիմանայինք, որ Կրասինը ստորագրել է ռուս-անգլիական համաձայնագիրը: Սակայն այս հանգամանքը ոչ մի կերպ չպետք է խանգարի Անգլիայի հետ մեր բարեկամական հարաբերություններին: Վերջինս չի կարող պահանջել, որ մենք պարտադրված պատերազմ վարենք Թուրքիայի դեմ»¹⁸: Դժվար չէ նկատել, որ ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման օրվա հարցում դիվանագետ Գ. Չիչերինը դարձյալ խուսանավել է ճշմարտությունը հայտնելուց:

Այսպիսով՝ բերված փաստերից ու պարզաբանումներից կարելի է եզրակացնել, որ անգլիացիներին և ողջ միջազգային հանրությանը մոլորության մեջ գցելու նպատակով բոլշևիկներն ու քեմալականները մարտի 18-ին ստորագրված պայմանագիրը թվագրել են մարտի 16-ով՝ ցույց տալու համար, թե իբր այն ստորագրվել է Լոնդոնի անգլո-ռուսական առևտրական համաձայնագրից առաջ կամ գոնե նույն օրը՝ մարտի 16-ին, և իբր թե՛ Մոսկվան տեղյակ չի եղել լոնդոնյան համաձայնագրի քաղա-

13 Տե՛ս ԳՍԱ, ֆ.114, ց. 2, գ. 68, ք. 26:

14 Տե՛ս Хейфец Ал., Советская дипломатия и народы Востока 1921-1927 гг., М., 1968, էջ 118:

15 Տե՛ս ДВП СССР, т. 4, էջ 657:

16 Տե՛ս «Геноцид армян (док. и ком.)», т. 2, ч. 1, էջ 468:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 473:

18 ДВП СССР, т. 4, с. 13-14.

քական բովանդակությանը, որպեսզի Կարսը և Արդահանը Հայաստանին վերադարձնելու վերաբերյալ թուրքերին պահանջ ներկայացնեն:

Այստեղից դժվար չէ նկատել, որ Մոսկվան և Անգորան անգամ պայմանագրի ստորագրման ամսաթիվն են կեղծել, որպեսզի արտաքին հնարավոր ճնշմամբ թույլ չտրվի Հայաստանի տարածքային-սահմանային խնդրի հայասնպաստ որևէ լուծում:

Ահա սա է պատմական ողջ ճշմարտությունը Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի կնքման ստույգ օրվա վերաբերյալ: Մույն հրապարակման ցավալի հետևությունն այն է, որ, Մ. Վրացյանի պատկերավոր խոսքերով ասած, «բոլշևիկյան մուրճի և թուրքական սայի» արանքում հայտնված Հայաստանի ու հայության հետագա ճակատագրի վերաբերյալ Խորհրդային Ռուսաստանը և քեմալական Թուրքիան սկզբունքային համաձայնության եկան ոչ միայն Հայաստանն իրար մեջ բաժանելու, այլև անգամ երկկողմանի դիվանագիտական աճապարարության դիմելու հարցում, որպեսզի շրջանցվի այդ օրերին Լոնդոնում ընթացող ռուս-թրիտանական բանակցությունների ժամանակ անգլիացիների ներկայացրած պահանջ-առաջարկը՝ Հայաստանին վերադարձնելու գոնե նրա օրգանական մաս կազմող Կարսի և Արդահանի շրջանները: Այլևս չենք խոսում Մուրմալուի գավառի մասին, որը երբեք չէր եղել Օսմանյան կայսրության կազմում: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, տարված լինելով համաշխարհային հեղափոխության սին գաղափարներով և իր հավատարմությունը հայտնելով թուրքական «Ազգային ուխտ»-ին, փորձ չարեց պահանջելու Կարսի և Արդահանի շրջանների վերադարձը Հայաստանին, այն դեպքում, երբ դրանք, վերջին հաշվով, պետք է հսկայածավալ Խորհրդային կայսրության մասը կազմեին:

Արարատ Մ. Հակոբյան-գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայաստանի Հանրապետության 1918-1920 թթ. պատմության առանցքային հիմնահարցերը: Ուսումնասիրել է նաև Խորհրդային Հայաստանի 1920-1930-ականների պատմությունը:

Summary

MARCH 16 OR 18?

The signing deadlines of the 1921 Russian-Turkish
Treaty of Moscow

Ararat M. Hakobyan
Doctor of Historical Sciences

Key words - the 1921 Treaty of Moscow, Treaty of London, March 16 or 18 ?, Russia, Great Britain, G. Chicherin, “The National Covenant”, V. Lenin, territory, negotiations, falsification, Kars, to sign, to yield.

Considering the issue of the deadlines of signing the 1921 Russian-Turkish “Friendship and Brotherhood” Treaty of Moscow from the distance of about a century, the following may be stated.

1. In the history of international diplomacy such cases are unique that the two internationally unrecognized states – the RSFSR and Kemalist Turkey, discussed and jointly decided on territorial-border issues of Armenia – an independent third state, without its knowledge and involvement. That is to say, the 1921 Treaty of Moscow is illegal and invalid and cannot contain any obligation for the successor modern Republic of Armenia to recognize that treaty.
2. The second political-diplomatic oddity that is the main focus of this publication is that the two negotiating parties – the Russian and the Turkish sides, dictated by their great-power interests, even falsified the exact day of the signature of the Treaty of Moscow. It was actually signed on March 18, 1921, but “March 16” is recorded on the document, and to this day this erroneous historical date continues to be circulated in historical literature.

Much related to the history and the fate of the Armenian people, the 1921 March 16 or 18 calendar games around the Moscow treaty date in diplomacy can be characterized as a peculiar historical falsification (fake) that shows once again that Armenia’s distant and close, sometimes friendly and allied states often resorted to violating the legitimate interests of the Armenian people, through seizing, dividing between each other and appropriating the vital territories of their historic homeland. The abovementioned episode is an instructive experience and lesson in the millennia-old Armenian history, from which one must learn, draw appropriate conclusions, gain historical and political experience on the way to the consolidation of our modern-day independent statehood.

16 ИЛИ 18 МАРТА?

О сроках подписания русско-турецкого Московского договора 1921 г.

Арарат М. Акопян

Ключевые слова - 1921 г., Московский договор, Лондонское соглашение, 16 или 18 марта, Россия, Великобритания, Г. Чичерин, «Национальный обет», В. Ленин, территория, переговоры, фальсификация, Карс, подписать, уступить.

Рассматривая вопрос о сроках подписания Московского русско-турецкого договора «о дружбе и братстве» 1921 г. с почти столетнего расстояния, можно констатировать следующее:

1. В истории международной дипломатии редки такие случаи когда два непризнанных международным сообществом государства – РСФСР и кемалистская Турция обсудили и приняли совместные решения о территориально-пограничных вопросах считающегося независимым третьего государства – Армении, без ведома и участия последней. То есть Московский договор 1921 г. изначально незаконен и недействителен и не может содержать какое-либо обязательство по признанию этого договора для правопреемника Советской Армении – нынешней Республики Армения.

2. Второй политико-дипломатический курьез, входящий в основной материал данной публикации, это то, что две стороны переговоров – русская и турецкая – следуя своим великодержавным интересам, прибегнув к политическому жонглерству, сфальсифицировали даже точную дату подписания Московского договора: в действительности он был подписан 18 марта 1921 г., однако в документе стоит дата «16 марта», и до сих пор эта неправильная историческая дата продолжает фигурировать в исторической литературе.

Календарная игра «16 или 18 марта 1921 г.» со сроками Московского договора, в значительной степени связанного с историей Армении и судьбой армянского народа, можно квалифицировать в истории дипломатии как своеобразную историческую фальсификацию (фейк), которая в лишний раз показывает, к каким средствам часто прибегали далекие и близкие к Армении, иногда и представляющиеся дружественными и союзными государства для того, чтобы попирать законные интересы армянского народа, захватить, разделить между собой и присвоить жизненно важные территории, являющиеся его исторической колыбелью. Вышеприведенное событие является поучитель-

ным опытом и уроком из тысячелетней истории армянского народа, на котором нужно учиться, делать соответствующие выводы, набраться исторического и политического опыта на пути укрепления независимой государственности.

REFERENCES

1. «Dokumenty vneshnej politiki SSSR», t. 3, M., 1959 **(In Russian)**.
2. «Dokumenty vneshnej politiki SSSR», t. 4, M., 1960 **(In Russian)**.
3. «Genocid armjan: otvetstvennost' Turcii i objazatel'stva mirovogo soobsh'estva (dokumenty i kommentarij)», sost. prof. **Barsegov Ju. G.**, t. 2, ch. 1, M., 2003, t. 2, ch. 2, M., 2005 **(In Russian)**.
4. «Hayastani Hanrapetut'yunë 1918-1920 t't'», k'aghak'akan patmut'yun, p'astat'ght'eri yev nyut'eri zhoghovatsu, kazmogh' **Ghazakhets'yan Vl. yev urishner**, Yer., 2000 **(In Armenian)**.
5. «Izvestija», M., 22 marta 1921 g. **(In Russian)**.
6. **Galoyan G.**, Hayastanë yev mets terut'yunnerë 1917-1923 t't', Yer., 1999 **(In Armenian)**.
7. HAA, f. 114, ts'. 2, g. 68, t'. 26 **(In Armenian)**.
8. **Irazek H. (Y.)**, Motik ants'ealits' (patmakan depk'er yev aprumner 1917-1922 t't'), Pëyrut', 1956 **(In Armenian)**.
9. **Kazandzhjan P.**, K voprosu o datirovke Moskovskogo sovetско-tureckogo dogovora 1921 g., «Lraber' has. git.», Yer., 1999 **(In Russian)**.
10. RGASPI, f. 85, op. s/Turcija, d. 25, l. 43 **(In Russian)**.
11. Rúsastani sots'ial-k'aghak'akan patmut'yan petakan arkhiv, f. 17, ts'. 3, g. 138, t'. 3 (mikrozhapavneri havak'atsu) **(In Armenian)**.
12. **Xejfec Al.**, Sovetskaja diplomatija i narody Vostoka 1921-1927 gg., M., 1968 **(In Russian)**.